

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆԻՍ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարությը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարությունը: Պատասխանների ճնարութիւնը ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

1 Քերանային ապարատի ո՞ր տիպն է բնորոշ լվերին.

- 1) լիզող
- 2) կրծող-ձծող
- 3) կրծող
- 4) ծակող-ձծող

2 Քանի՞ պարանոցային ող ունի գորտը.

- 1) 8
- 2) 1
- 3) 2
- 4) 7

3 Ո՞ր կենդանու սրտի փորոքից են դուրս գալիս թոքային օարկերակը և առտայի աջ ու ձախ աղեղները.

- 1) նշտարիկի
- 2) աղավնու
- 3) ոսկրային ձկան
- 4) մողեսի

4 Ո՞ր բույսի տերևներն են ցանցաջիղ.

- 1) գարու
- 2) հնվտաշուշանի
- 3) եզիպտացորենի
- 4) ազուավաչքի

5 Որտե՞ղ է գտնվում քոչուների ձայնային ապարատը.

- 1) կոկորդի և շնչափողի միջև
- 2) կոկորդում
- 3) երկրորդային բրոնխներում
- 4) շնչափողի ստորին մասում

6

Սնկերի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) մուկորը բորբոսասունկ է
- 2) խմորասնկերը բազմաքչից, քլորոֆիլ պարունակող սնկեր են
- 3) սնկերն ավտոտրոֆ օրգանիզմներ են
- 4) դրոժները և պենիցիլը բորբոսասնկեր են

7

Ո՞ր հիվանդության հարուցիչն է պատկանում արոկարիոտներին.

- 1) պոլիոմիելիտի
- 2) ռիֆթերիայի
- 3) ծաղիկի
- 4) էնցեֆալիտի

8

Ի՞նչը բնորոշ չէ մարդու ողնուղեղի գորշ նյութին.

- 1) ողնուղեղը շրջապատված է ողնուղեղային հեղուկով
- 2) ողնուղեղի կրծքային, գոտկային բաժիններում կան կողմնային եղջյուրներ
- 3) գորշ նյութը տեղափորված է ողնաշարային խողովակի շուրջ
- 4) գորշ նյութի առջևի եղջյուրներում գտնվում են շարժողական նեյրոնների մարմինները

9

Լողական վերլուծիչի ո՞ր բաղադրիչը չի գտնվում մարդու ներքին ականջում.

- 1) եվստախյան փողոց
- 2) նյարդային վերջույթը
- 3) հիմային թաղանթը
- 4) ծածկող թաղանթը

10

Ի՞նչ է դիտվում մարդու օրգանիզմում B₂ վիտամինի անբավարարության դեպքում.

- 1) սիրտ-անոթային և նյարդային համակարգերի աշխատանքի խանգարում, բերի-բերի
- 2) տեսողության խանգարում, կոպերի ներքին մակերևույթի բորբոքում, բերանի լորձաթաղանթի ախտահարում
- 3) թունավոր նյութերի կուտակում մկանային հյուսվածքում, շարորակ սակավարյունություն
- 4) արյունազեղումներ, հավկուրություն

11

Ի՞նչ հիվանդություն է առաջանում մարդու վահանաձև գեղձի թերզործառույթի հետևանքով.

- 1) բազեղովյան
- 2) բրոնզախտ
- 3) թզուկություն
- 4) լորձայտուց

12

Ինչե՞րն են կազմում թոքամզային խոռոչի պատերը մարդու օրգանիզմում.

- 1) մերձպատային (առպատային) թոքամզային թաղանթը և կրծքավանդակի պատը
- 2) թոքային թոքամզային թաղանթը և մերձպատային (առպատային) թոքամզային թաղանթը
- 3) թոքային հյուսվածքը և թոքային թոքամզային թաղանթը
- 4) թոքերը և կրծքավանդակի պատերը

13

Մարդու օրգանիզմում ինչպե՞ս է կամ ինչե՞րի միջոցով է իրականացվում ոչ յուրահատուկ իմունիտետը.

- 1) ֆազոցիտոզ իրականացնող լեյկոցիտների միջոցով
- 2) հակամարմինների սինթեզի միջոցով
- 3) մարմնի ջերմաստիճանի կտրուկ նվազեցմամբ
- 4) օրգանիզմից հեղուկի մեծ քանակի հեռացմամբ

14

Մարդու օրգանիզմի ո՞ր կառուցվածքային տարրն է կազմված շարակցական հյուսվածքից.

- 1) բարակ աղիի թավիկի պատ
- 2) ջիլ
- 3) մազ
- 4) թոքաբշտի պատ

15

Մարդու մաշկի ո՞ր շերտում են գտնվում մազարմատները.

- 1) ենթամաշկային բջջանքում և էպիլիեպմիսում
- 2) բուն մաշկում
- 3) մելանին սինթեզող մահացած բջիջների շերտում
- 4) վերնամաշկում

16

Ո՞րն է պոլիմեր.

- 1) մեթիոնինը
- 2) խիտինը
- 3) էրիթրոզը
- 4) ռիբոզը

17

Որտե՞ղ են առաջանում պերօքսիտոմները և լիզոսոմները.

- 1) Գոլցիի ապարատում
- 2) բջջակորիգում
- 3) ռիբոսոմում
- 4) բջջային կենտրոնում

18

Կորիզակների վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) առաջանում են քրոմոսոմի ո-ՌՆԹ-ի կառուցվածքը գաղտնագրող հատվածների շուրջը
- 2) կորիզակներում տեղի է ունենում կորիզաբաղանքի ձևավորումը
- 3) լուսային մանրադիտակի տակ երևում են միայն բաժանվող բջիջներում
- 4) առաջանում են կորիզաբաղանքում և Գոլցիի ապարատի բաղանքներում

19

Ի՞նչ է տրանսլյացիան.

- 1) ի-ՌՆԹ-ի վրա պոլիակտիդային շղթայի սինթեզի գործընթացն է
- 2) ՌՆԹ-ի մոլեկուլից ժառանգական տեղեկատվության փոխանցումն է ի-ՌՆԹ-ին
- 3) բջջակորիգում ի-ՌՆԹ-ի մոլեկուլի սինթեզն է
- 4) ժառանգական տեղեկատվության փոխանցումն է ի-ՌՆԹ-ից ո-ՌՆԹ-ի մոլեկուլին

20

Ո՞ր շարքում է ճիշտ նշված ՌՆԹ-ի նուկլեոտիդներից մեկի կազմությունը.

- 1) թիմին – ռիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 2) ադենին - դեզօքսիուրոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 3) գուանին - դեզօքսիուրոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 4) ուրացիլ – ռիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ

21

Որտե՞ղ է ԱԵՖ սինթեզվում.

- 1) ողորկ էնդոպլազմային ցանցում
- 2) Գոլջիի ապարատում
- 3) քլորոպլաստում
- 4) ռիբոսոմում

22

Ո՞ր պնդումն է ճիշտ երկենցաղների սաղմնային զարգացման գաստրոլացման փուլի վերաբերյալ.

- 1) երկշերտ սաղմն առաջանում է բլաստուլի պատի ներփրումով բլաստուլի խոռոչի մեջ
- 2) վեգետատիվ քսեռի բջիջները սողում են դեպի անիմալ քսեռ և, հայտնվելով սաղմի ներսում, ձևավորում են էնտոդերմը
- 3) անիմալ քսեռի բջիջները սողում են դեպի վեգետատիվ քսեռ և, աճելով հայտնվում են սաղմի ներսում
- 4) սաղմնային սկավառակը ճեղքվում է երկու թերթիկի. արտաքին՝ էկտոդերմի և ներքին՝ էնտոդերմի

23

Ո՞ր կենդանիներին է բնորոշ հետսաղմնային անուղղակի զարգացումը.

- 1) տղրուկներին
- 2) գորտերին
- 3) սարդերին
- 4) բոչուններին

24

Ի՞նչ բջիջ է հեռանում ձվարանից ձվազատման հետևանքով.

- 1) երկրորդ կարգի օվոցիտ
- 2) ձվաբջիջ
- 3) օվոզոնիում
- 4) առաջին կարգի օվոցիտ

25

Ինչո՞վ է պայմանավորված ցիտոպլազմային ժառանգականությունը.

- 1) ցիտոպլազմա ներթափանցած վիրուսների գեներով
- 2) միտոքոնդրիումների և քլորոպլաստների գեներով
- 3) կորիզի քրոմոսոմների գեներով
- 4) ցիտոպլազմայում գտնվող ռիբոսոմների ՌՆԹ-ի մոլեկուլներով

26

Որքա՞ն կլինի հոմոզիգոտ օրգանիզմների տոկոսային բաժինը ըստ տվյալ հատկանիշի երկու հետերոզիգոտ առանձնյակների միահիքքիդ խաչասերման արդյունքում առաջացած սերնդում.

- 1) 25%
- 2) 0%
- 3) 100%
- 4) 50%

27

Ի՞նչն է բնորոշ մողիֆիկացիոն փոփոխականությանը.

- 1) փոփոխությունները մուտացիաների արդյունք են, բնութագրվում են վարիացիոն կորուլ
- 2) մեծ մասամբ փոփոխվում է քրոմոսոմների թվաքանակը
- 3) փոփոխությունների արդյունքում վերակառուցվում են քրոմոսոմները
- 4) փոփոխությունները չեն փոխանցվում հաջորդ սերունդներին

28

Մարդու ո՞ր իիվանդության պատճառն է առևտոսումներում գտնվող մուտանտ դոմինանտ գենը.

- 1) պոլիդակտիլիայի
- 2) Շերնչևսկու և Թերների սինդրոմի
- 3) «մլավոցի սինդրոմի»
- 4) ֆենիլկետոնուրիայի

29

Գ. Սենդելի ձևակերպած ո՞ր օրենքն է պնդում, որ զամետների առաջացման ժամանակ դրանցից յուրաքանչյուրի մեջ ընկնում է ժառանգական գույզ գործոններից տվյալ հատկանիշին համապատասխանող միայն մեկ գործոն.

- 1) հատկանիշների անկախ բաշխման օրենքը
- 2) հատկանիշների ճեղքավորման օրենքը
- 3) դոմինանտության օրենքը
- 4) զամետների մաքրության օրենքը

30

Ո՞ր գեներն են կոչվում շղթայակցված.

- 1) հոմոլոգ քրոմոսոմների ալելային գեները
- 2) մեկ քջի առևտոսումների տարրեր գույզերի նույն լոկուսներում գտնվող գեները
- 3) X և Y քրոմոսոմների նույն լոկուսներում գտնվող գեները
- 4) մեկ քրոմոսոմում գտնվող գեները

31

Ի՞նչն է ընկած տեսակի կենսաքիմիական չափանիշի հիմքում.

- 1) առանձնյակների ներքին և արտաքին կառուցվածքի նմանությունները
- 2) տեսակի գրաղեցրած արեալը
- 3) տեսակների կարիտաբերի տարբերությունները
- 4) սպիտակուցների և նուկլեինաքրուների կառուցվածքն ու կազմը

32

Նշված օրգանիզմներից որո՞նք ավտոտրոֆ չեն.

- 1) նիտրիֆիկացնող բակտերիաները
- 2) ծծմբաբակտերիաները
- 3) երկարաբակտերիաները
- 4) ամոնիֆիկացնող բակտերիաները

33

Ո՞րն է իդիոադապտացիայի օրինակ.

- 1) ֆոտոսինթեզի գործընթացի առաջացումը
- 2) ներքին բեղմնավորման ի հայտ գալը
- 3) կատվածկների մարմնի տափակացումը
- 4) երկենցաղների եռախորշ սրտի առաջացումը

34

Ո՞ր շարքում նշված օրգաններն են հոմոլոգ.

- 1) սեղի և հովտաշուշանի կոճղարմատները
- 2) չղջիկի և թիթեռի թևերը
- 3) խլորդի և իշախառանչ արջուկի փորող վերջույթները
- 4) ձկան և խեցքետնի խոիկները

35

Ո՞ր նյութն է կենսածին.

- 1) օվկիանոսի ջուրը
- 2) կրային ապարը
- 3) հողը
- 4) երկնաքարը

36

Նշված բույսերից ո՞րն է գիշատիչ.

- 1) սարացենիան
- 2) օմելան
- 3) զաղձը
- 4) ոսֆլեգիան

37

Սպիտակուցի մոլեկուլային զանգվածը 31320 գ.ա.մ. (զանգվածի ատոմական միավոր) է: Ամինաքրուների միջին մոլեկուլային զանգվածը 120 գ.ա.մ. է: Ինչքա՞ն ժամանակում (վրկ) բջջում կսինթեզվի տվյալ սպիտակուցը, եթե մեկ ամինաքրվի միացումը տևում է 0,2 վրկ:

- 1) 52,2
- 2) 52
- 3) 1300
- 4) 1305

38

Տղամարդու սեռական գեղձերում 400 սկզբնական սեռական բջիջներ (սպերմատոզոմիումներ) արդեն տեղափոխվել են աճման գոտի: Որքա՞ն սպերմատոզոմիդներ կարող են զարգանալ.

- 1) 1600
- 2) 200
- 3) 400
- 4) 800

(39-40) Զափահաս մարդու մարմնի զանգվածը 85 կգ է, իսկ արյան խտությունը՝ 1,06 գ/մլ:

39

Մոտավորապես քանի՞ լիտր արյուն ունի այդ մարդը.

- 1) 6,3 - 7,2
- 2) 5,61 - 6,42
- 3) 7,28 - 8,04
- 4) 4,62 - 5,28

40

Հաշվել ձևավոր տարրերի զանգվածը (կգ).

- 1) 2,38 - 3,06
- 2) 2,98 - 3,74
- 3) 1,96 - 2,52
- 4) 5,61 - 6,42

41

Բաժանման ո՞ր պրոցեսը (նշված է ձախ սյունակում) բջջի բաժանման ո՞ր ձևին և փուլին (նշված են աջ սյունակում) է համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Բաժանման պրոցես

- A. ցենտրիումները տարամիտվում են դեպի տարրեր քենոներ, սկսում է ձևավորվել բաժանման իլիկը, հոմոլոգ քրոմոսոմներն առանձին-առանձին են
- B. հապլոիդ թվով երկրումատիդային քրոմոսոմներն ապապարուրվում են
- C. տեղի է ունենում ցիտոպլազմայի բաժանում, ձևավորվում են դիպլոիդ բջիջներ
- D. հոմոլոգ քրոմոսոմները դասավորվում են իլիկի հասարակածային գոտում՝ դեմ դիմաց
- E. տեղի է ունենում հոմոլոգ քրոմոսոմների կոնյուգացիա և կրոսինգօվեր
- F. տեղի է ունենում քրոմատիդների տարամիտում

Բջջի բաժանման ձև և փուլ

- 1. միտոզի պրոֆազ
- 2. միտոզի թելոֆազ
- 3. մեյոզի երկրորդ բաժանման անաֆազ
- 4. մեյոզի առաջին բաժանման թելոֆազ
- 5. մեյոզի առաջին բաժանման պրոֆազ
- 6. մեյոզի առաջին բաժանման մետաֆազ

42

Օրգանիզմի ո՞ր սեռին (նշված է ձախ սյունակում) ո՞ր բնութագիրն է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգանիզմի սեռը

- A. ծղրիդի իգական սեռը
- B. պոչավոր երկենցաղի արական սեռը
- C. մարդու արական սեռը
- D. թիթեռի իգական սեռը
- E. թռչունի արական սեռը
- F. դրոզոֆիլ պտղաճանճի իգական սեռը
- G. մողեսի իգական սեռը

Բնութագիր

- 1. հետերոգամետ
- 2. հոմոգամետ

43

Օրգանիզմների փոխհարաբերության ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) սիմբիոզի ո՞ր ձևին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում:
Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգանիզմների փոխհարաբերության բնութագիր

Սիմբիոզի ձև

- | | |
|--|----------------|
| A. Էպիֆիտ բույսերն օգտագործում են ծառաբույսերը
որպես հենարան | 1. մուտուալիզմ |
| B. Խեցգետնի և ակտինիաների համատեղ կեցությունը | 2. ամենսալիզմ |
| C. Երկու տեսակներից մեկը տուժում է, իսկ մյուսի
համար փոխազդեցությունն անտարբեր է | 3. կոմենսալիզմ |
| D. Կաչող ձկան և մեծ ձկան փոխազդեցությունը | 4. կոռավերացիա |
| E. Երկու փոխազդող տեսակներից միայն մեկն է
օգուտ ստանում, իսկ մյուս տեսակի համար
փոխազդեցությունն անտարբեր է | |
| F. Խոշոր ծառերի և դրանց հովանու տակ աճող
լուսասեր խոտաբույսերի փոխազդեցությունը | |
| G. Փոխազդեցությունը անհրաժեշտ պայման է երկու
տեսակների համար, որի դեպքում երկուսն էլ օգուտ
են ստանում | |
| H. Երկու տեսակն էլ օգուտ են ստանում, սակայն
դրանց համատեղ գոյությունը յուրաքանչյուր
տեսակի համար անհրաժեշտ պայման չի | |

44

Գտնել ոսկրային ձկների գլխուղեղի բաժինների (նշված են աջ սյունակում) և նրանց
բնորոշ առանձնահատկությունների, գործառույթների (նշված են ձախ սյունակում)
համապատասխանությունը.

Առանձնահատկություն, գործառույթ

- A. դուրս են գալիս հոտառական նյարդերը
- B. կարգավորում է հավասարակշռությունը
- C. կարգավորում է շնչառությունը
- D. դուրս են գալիս տեսողական նյարդերը
- E. դուրս են գալիս աչքը շարժող նյարդերը
- F. կարգավորում է մարսողությունը
- G. կարգավորում է արյան շրջանառությունը

Գլխուղեղի բաժին

- 1. երկարավուն ուղեղ
- 2. միջակա ուղեղ
- 3. միջին ուղեղ
- 4. առջևի ուղեղ
- 5. ուղեղիկ

45

Մարդու մկանների ո՞ր գործառույթները (նշված են ձախ սյունակում) ո՞ր մկաններին են (նշված են աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Գործառույթ

- A. տարածում են (է) ոտքը ծնկային հողում
- B. կծկվելիս իջեցնում են (է) գլուխը
- C. ծալում են (է) նախաբազուկը
- D. կծկում են (է) թիակներն իրար մոտեցնելիս
- E. ձգում են (է) ազդրը դեպի հետ
- F. տարածում են (է) նախաբազուկը
- G. ծալում են (է) ոտքը կոնքազդրային հողում

Մկաններ

- 1. ազդրի քառագլուխ մկան
- 2. քազկի եռագլուխ մկան
- 3. սեղանաձև մկան
- 4. քազկի երկգլուխ մկան
- 5. կրծոսկրաանրակապտկաձև մկաններ
- 6. նստատեղի մկաններ

46

Ինչպիսի՞ն է պրոցեսների հաջորդականությունը էներգիական փոխանակության ժամանակ.

- 1. մարտողական վակուումի առաջացում
- 2. պիրոխաղողաթթվի անցում միտորոններիումներ
- 3. միաշաքարի ճեղքում
- 4. ֆերմենտների ազդեցությամբ բարդ օրգանական նյութերի ճեղքում
- 5. ացետիլ-կոֆերմենտ A-ի առաջացում
- 6. սննդային մասնիկի միաձուլում լիզոսոմի հետ
- 7. սննդային մասնիկի անցում բջիջ

47

Ինչպիսի՞ն է ֆոտոսինթեզի գործընթացների հաջորդականությունը.

- 1. քլորոֆիլի մոլեկուլի վերականգնում
- 2. քլորոֆիլի մոլեկուլի գրգռում
- 3. ոիքուլոգարիֆոսֆատ-կարբօքսիլազ ֆերմենտի մասնակցությամբ վեցածխածնային միացության առաջացում
- 4. ֆոտոնի կլանում
- 5. ջրի ֆոտոլիզ
- 6. էլեկտրոնների անջատում քլորոֆիլի մոլեկուլից
- 7. մոլեկուլային թթվածնի առաջացում

48

Ինչպիսի՞ն է պրոցեսների ճիշտ հաջորդականությունը՝ ռեցեսիվ մուտացիաների առաջացումից մինչև նրանց՝ ֆենոտիպում արտահայտվելը.

1. ըստ մուտանտ գենի՝ հոմոզիգոտ ձևի առաջացում
2. ռեցեսիվ մուտացիա կրող գամետների միաձուլում
3. նույլեոտիդների փոխարինում ԴՆԹ-ի մոլեկուլի որոշակի հատվածում
4. ռեցեսիվ մուտացիայի առաջացում
5. ռեցեսիվ մուտացիա կրող օրգանիզմում գամետների առաջացում
6. մուտացիայի արտահայտում ֆենոտիպում
7. ռեցեսիվ մուտացիայի տարածում պոպուլյացիայում

49

Նշել պրոցեսների ճիշտ հաջորդականությունը Ի.Պ. Պավլովի փորձերում, որոնց արդյունքում ձևավորվում է պայմանական ռեֆլեքսը.

1. անտարբեր գրգռիչի (հետազայում պայմանական) ներգործություն
2. ոչ պայմանական ռեֆլեքսի կենտրոնի գրգռում
3. անտարբեր գրգռիչի և ոչ պայմանական ռեֆլեքսի կենտրոնի միջև ժամանակավոր կապի առաջացում
4. թերանի խոռոչի լորձաբաղանքի ընկալիչների գրգռում
5. ժամանակավոր կապի միջոցով պայմանական գրգռիչի ներգործությամբ ոչ պայմանական ռեֆլեքսի կենտրոնի գրգռում
6. թքարտադրություն
7. անտարբեր գրգռիչի և ոչ պայմանական ռեֆլեքսի գրգռիչի զուգակցման կրկնություն

50

Նշել մարդու օրգանիզմում դեպի գլխուղեղի բջիջներ ճարպերի տեղափոխման հաջորդական ուղին՝ սկսած բարակ աղիներում ճարպերի քայլայման գործընթացից.

1. թքային երակ
2. գլիցերինի և ճարպաթրուների ներծծում
3. գլխուղեղի զարկերակ
4. բավիկների էպիթելի բջիջներում օրգանիզմին բնորոշ ճարպերի սինթեզ
5. առյտա
6. աջ նախասիրտ
7. նեյրոններ
8. ավշային մազանոքներ
9. ձախ փորոք

51

Ինչ հաջորդականությամբ են դասավորված մարդու մարտողական համակարգի բաժինները: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. լայնակի խթաղի
2. զստաղի
3. վերելակ խթաղի
4. ստամոքսի մարմին
5. բարակ աղի
6. վայրիջակ խթաղի
7. կույր աղի
8. ստամոքսի հատակ

52

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում գործընթացները մարդու օրգանիզմում ցուրտ պայմաններում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. մաշկ մղվող արյան ծավալի նվազում
2. մաշկի սառնության ընկալիչների դրդում
3. մաշկի արյունատար անոթների նեղացում
4. ջերմատվության բուլացում
5. արտաքին միջավայրի ջերմաստիճանի նվազում
6. ջերմակարգավորման կենտրոնի դրդում

53

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. այծյամների, շների, ճիերի անրակները լավ զարգացած են
2. բաղակտուցը ձվաղողող է, չունի կոյանոց, ունի ականջախեցի
3. օղակավոր որդերն ունեն մարմնի երկրորդային խոռոչ, ճառագայթային համաչափություն, երկշերս են
4. լյարդի ծծանի միջանկյալ տերը լճախխունջն է
5. միջատների մալալիգյան անոթները մի ծայրով բացվում են հետնաղու սկզբնամասում
6. բարենպաստ պայմաններում հողաթափիկ ինֆուզորիան բազմանում է անսեռ եղանակով՝ կիսվելով մարմնի երկարությամբ
7. բռչունների օդապարկերը փոքրացնում են մարմնի տեսակարար կշիռը, մասնակցում են ջերմակարգավորմանը

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- մկանային բջիջների սարկովազմային ցանցի միջոցով ցիտովազմայում պահպանվում է կալցիումի իոնների շատ ցածր խտություն
- դիմեինը և ֆլագելինը ազդանշանային սպիտակուցներ են, որոնք կազմավորում են մկանաբելիկներ և միմյանց հետ փոխազդելով, մեկը մյուսի նկատմամբ սահելով՝ ապահովում են մկանների կծկումը
- շրջակա միջավայրում կախումի իոնների պարունակությունն ավելին է, քան կենդանի բջիջներում, իսկ նատրիումի իոնների պարունակությունը կենդանի բջիջներում է ավելին, քան շրջակա միջավայրում
- երբ պոտենցիալների տարբերությունը միտոքոնոպրիումի ներքին թաղանթի երկու կողմերում հասնում է որոշակի սահմանային մեծության, պրոտոնները ներքին թաղանթի ներքին կողմից անցնում են արտաքին կողմ
- բողոքմամբ բազմանում են խմորասնկերը, հիդրաները, հիդրոիդ և կորալյան պոլիպները
- գենետիկական կողը վերածածկվող չէ, այսինքն յուրաքանչյուր նուկլեոտիդ կարող է լինել միայն մեկ որոշակի եռյակի կազմում

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

- բարձր ջերմաստիճանը դանդաղեցնում է արյան մակարդումը, քանի որ նվազում է այդ գործընթացին մասնակցող ֆերմենտների ակտիվությունը
- վեգետատիվ նյարդային համակարգի նյարդաբելերը մարմնական նյարդաբելերի համեմատ ավելի բարակ են, իսկ գրգիռի փոխանցման արագությունն ավելի դանդաղ է
- սիմպաթիկ նյարդերով հաղորդվող նյարդային ազդակները հանգեցնում են մարսողական գեղձերի ծորանների, սրտի պսակաձև անոթների, ուղեղի անոթների նեղացմանը
- միջին ուղեղում տեղակայված կենտրոնները կարգավորում են բբի մեծությունը և ակնաբյուրեղի կորությունը
- համի և աչքի ընկալիչներից նյարդային ազդակներն ուղարկվում են ողնուղեղ, ապա ուղեղաբնով հասնում տեսաթմբի համապատասխան կենտրոններ
- գանգի ուղեղային բաժնի զույգ ոսկրերն են գագաթոսկրերը, քունքոսկրերը
- թրոմբոցիտներն արյան ամենափոքր ձևավոր տարրերն են, ունեն կորիզ, քայլայվում են փայծաղում

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. կետանմանների և թիոտանինների թիանման վերջույթների ձեռք բերումը կոնվերգենցիայի օրինակ է
2. մակրոէվոլյուցիան ավարտվում է նոր տեսակի առաջացմամբ
3. կենսոլորտի կայունությունն ապահովվում է նյութերի շրջապտույտում կենդանի նյութի անմիջական մասնակցությամբ
4. որքան բարդ է էկոհամակարգը, այնքան ցածր է ներքին կարգավորվածության աստիճանը
5. Ի. Շմալհաուզենը ցույց է տվել, որ չփոփոխվող գոյության պայմաններում բնական ընտրությունը և էվոլյուցիան չեն դադարում
6. մրցակցությունը էկոլոգիական կենսածին գործոն է

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. Երկիրետերողիզոտ առանձնյակի և երկիրմողիզոտ դոմինանտ առանձնյակի խաչաերման արդյունքում, զույգ ալելներից մեկի ոչ լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում ստացվում են չորս գենոտիպային և չորս ֆենոտիպային խմբեր
2. յուրաքանչյուր օրգանիզմի բոլոր գեների ամբողջությունը կոչվում է գենոտիպ
3. գերդոմինանտության դեպքում հոմոզիզոտ վիճակում դոմինանտ ալելով պայմանավորված հատկանիշն ավելի ցայտուն է դրսերվում, քան հետերոզիզոտ վիճակում
4. պոլիմերիայի օրինակ է այն երևույթը, երբ ոլորի ծաղիկների կարմիր գունավորումը որոշող գենը պայմանավորում է նաև ցողունի կարմրավուն երանգը
5. սիմետրիկ տրանսլիկացիայի դեպքում մի քրոմոսոմի ցենտրոմեր պարունակող հատվածը միանում է մյուս քրոմոսոմի ցենտրոմեր չպարունակող հատվածի հետ
6. ակվարիումային գուապի ձկնիկի պոչալողակի գունավորումը Յ քրոմոսոմի հետ շղթայակցված հատկանիշ է

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. աղաթքուն և աղիքահյութը ստեղծում են թքվային միջավայր, որն ակտիվացնում է աղիներում գործող մարսողական ֆերմենտները
2. ենթաստամոքսային գեղձը կազմված է գլխիկից, մարմնից և պոչից, տեղակայված է գոտկային երկրորդ ռդի մակարդակում
3. արյան ճնշումը սիներակներում ավելի փոքր է, քան մազանոթներում
4. փորոքներից առրտայի և բռքային ցողունի ելքի տեղում գտնվում են փեղկավոր փականները, որոնք կանխում են արյան հետհոսքը փորոքների բուլացման ժամանակ
5. քիմքային և հետին լեզվային թքագեղձերը արտադրում են լորձային թուք
6. ենթաստամոքսային գեղձի ինսուլին հորմոնն լյարդում պահեստավորված գլիկոգենի հավելյալ քանակը դարձնում է գլյուկոզ

(59-60) Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման արդյունքում կուտակվել է 54 մոլ կաթնաթթու և պահեստավորվել է 48360 կԶ էներգիա: Ընդունել, որ 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաթթու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կԶ և ԱԵՖ-ի մինչև ԱԿՖ ճեղքման արդյունքում անջատվում է 30 կԶ/մոլ էներգիա:

59 Որքանո՞վ է թթվածնային փուլում էներգիայի կորուստը գերազանցում անթթվածին փուլում մինչև կաթնաթթվի առաջացումը էներգիայի կորստին:

60 Քանի՞ մոլ ջուր է առաջացել ամբողջ պրոցեսի ընթացքում:

(61-62) ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածի երկարությունը $2,21 \cdot 10^{-6}$ մետր է: Ա+Ծ / Գ+Ց քանակական հարաբերությունը հավասար է 1,5-ի, իսկ մեկ նուկլեոտիդի երկարությունը 0,34 նանոմետր է:

61

Գտնել աղենինային և թիմինային նուկլեոտիդների գումարը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում:

62

Հաշվել ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում ԴՆԹ-ի երկու շղթաների ազոտային հիմքերի միջև առաջացող ջրածնային կապերի թիվը:

- (63-65) Ծանր ֆիզիկական աշխատանք կատարելիս մարդու քոքերում արյան մեջ դիֆուզվել է 607,5 լ թթվածին: Ընդունել, որ աշխատանքի ժամանակ շնչառական շարժումներն արագացել են 2 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,5 անգամ, օրգանիզմում յուրացվող թթվածնի ծավալն աճել է 25 %-ով, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 2, իսկ մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղված արյան ծավալը՝ 1,4 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արքուն ժամանակ կատարում է 18 շնչառական շարժում, շնչառական օդի ծավալը 600 մլ է, սրտի բոլորաշրջանի տևողությունը՝ 0,8 վրկ և մեկ կծկման ժամանակ փորոքն արտամղում է 65 մլ արյուն:

63

Քանի՞ րոպե է տևել ծանր ֆիզիկական աշխատանքը:

64

Աշխատանքի ընթացքում քանի՞ լիտր թթվածին է ստացել զլխուղեղը: Ընդունել, որ զլխուղեղը ստանում է մեծ շրջան մղված արյան ծավալի 24 %-ը: Պատասխանը բազմապատկել 10-ով:

65

Որոշել մեկ օրվա ընթացքում սրտից արտամղված արյան ծավալը:

66

Ֆուտոսինթեզի ժամանակ կլանվել է 3,36 մ³ CO₂: Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (գրամ), եթե 1 մոլ գազը գրաղեցնում է 22,4 լիտր ծավալ:

(67-68) Երկնագույն աչքերով, արյան երրորդ խմբով, ալիքաձև մազերով կինն ամուսնացավ շագանակագույն աչքերով, արյան երկրորդ խմբով, ուղիղ մազերով տղամարդու հետ: Այդ ընտանիքում ծնվեց երկնագույն աչքերով, արյան առաջին խմբով, ուղիղ մազերով երեխա: Շագանակագույն աչքեր պայմանավորող գենն առտոսումային է և դոմինանտում է երկնագույն աչքեր պայմանավորող գենի նկատմամբ, ալիքաձև մազերը ստացվում են որպես միջանկյալ հատկանիշ, եթե ծնողներից մեկն ունի գանգուր մազեր, մյուսը՝ ուղիղ: Նշված հատկանիշները պայմանավորող գենները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում:

67

Որոշել այդ ընտանիքում երկնագույն աչքերով, արյան երրորդ խմբով և ալիքաձև մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

Պատասխանը բազմապատկել 100-ով:

68

Զանի^o տեսակի գենոտիպով երեխաներ կարող են ծնվել տվյալ ընտանիքում:

69

Ծածկասերմ բույսերի բեղմնավորման և սերմի զարգացման վերաբերյալ տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Վարսանդի սերմնարանում մեզասպոր երեք միտոտիկ բաժանումներից հետո սկիզբ է տալիս ութ հապլոիդ կորիզներ պարունակող սաղմնապարկին
2. Փոշոտումը փոշեհատիկի ներթափանցումն է վարսանդի սերմնարան և միաձուլումը մեզասպորի հետ
3. Կրկնակի բեղմնավորման արդյունքում վարսանդի սերմնարանից ձևավորվում է պտուղը
4. Վարսանդի սպիր վրա փոշեհատիկը ծլում է և առաջացնում է սաղմնապարկ
5. առէջի փոշանոթում դիպլոիդ միկրոսպորը կիսվում է միտոզով և առաջանում են երկու հապլոիդ հավաքակազմով բջիջներ՝ վեգետատիվ և գեներատիվ
6. գեներատիվ բջջից հետագայում առաջանում է փոշեխողովակը

70

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. Վերջնական մեզի առաջացումը տեղի է ունենում երիկամային ավազանում
2. Վեգետատիվ նյարդային համակարգի սիմպաթիկ բաժնի ազդեցությամբ ուժեղանում է ջրի հետադարձ ներծծումը, որի հետևանքով մեզը պակասում է
3. Անֆրոնի պատիճից սկսվում է ծնկաձև խողովակը, որն իջնում է միջուկային շերտ և վերածվում է ոլորտն (գալարուն) խողովակի, որտեղ տեղի է ունենում առաջնային մեզի ձևավորումը
4. Անֆրոններից մեզը հավաքող խողովակները միանալով առաջացնում են միզածորան, որը տանում է մեզը դեպի միզապարկ
5. Անֆրոնի պատիճի պատի երկու շերտերի միջև գտնվում է մազանոթների (մալպիզյան) կծիկը
6. Մեզն արտադրվում է անընդհատ